

Ը.

Ընկեր Մաթիկը, սահմանը անցնելէ ետքը, քանի՛-քանի՛ քաղաքներու մէջ պատմեր է այս հաղորդութիւնը: Իրեն սպասող հազար ու մէկ դառնութեանց հակառակ, անիկա չէր կրցած իր մէջէն փրցնել խորհուրդին այդ մկրտութեան վկայականը: Իր տեսածները, իրենց լաւովն ու վատովը, զինքը կ'ընէին ջղագրգիռ, յաճախ անիրաւ: Իր ժողովուրդը գտնելու իր առաքելութեան մէջ իր չվարձատրուիլը անիկա կը բաշխէր ահաւոր պայմաններուն, որոնք իբրեւ կեանք դրուած էին մեր ուսերուն: Մեր գերութիւնը մեր գործը չէր անշուշտ: Մաթիկ չհայհոյեց մեր պապերուն, մեր ժամերուն, մեր կրօնականներուն, ինչպէս 1900ին սովոր էին մեր իմաստունները ընել, երկրէն դուրս, երբ դատելու առիթ գտնէին մեր պատմութիւնը: Բայց չծածկեց իր հիասթափումն ալ իր տեսածներէն: Իր կարծիքով, մեր ջարդուիլը կը զանցէր որեւէ տրամաբանութիւն: Ամէն արեւելահայ այս մտածելու կերպը կը նախընտրէր արեւմտահայ պահպանողականութեան, որուն ամէնէն ստորին մեղքը պիտի կազմէր այս ինքնամեղադրանքը, թուրքին արդարացումով: Մաթիկին հիասթափումը նուէրն էր անոնց, որոնք «երկ-